


Լուսինեն և Արամը ծնվել են նույն ամսին, Արամը և Գայանեն՝ նույն օրը, սակայն՝ տարբեր ամիսներին: Համադասարանցիներից ո՞վ է ամենամեծը:

(A) Արամը (B) Լուսինեն (C) Գայանեն (D) Վարդանը (E) Հնարավոր չէ որոշել:

14. 30 երեխա մասնակցեց Արկածների այգում կազմակերպված միջոցառումներին. նրանցից 15-ը մասնակցեց «Շարժվող կամուրջ» մրցույթին, իսկ 20-ը՝ ձուպանով ցած սահեց: Երեխաներից քանի՞սը մասնակցեց մրցույթներից երկուսում:

(A) 25 (B) 15 (C) 30 (D) 10 (E) 5

15. Բերված մարմիններից ո՞րը կարելի է համադրել նկար 1-ում տրված մարմնի հետ այնպես, որ ստացվի ուղղանկյուն:




նկ. 1

16. 35 թիվը ունի այնպիսի հատկություն, որ այն բաժանվում է իր միավորների կարգում գրված թվանշանի վրա, այսինքն՝ 35-ը 5-ի բաժանելիս ստացվում է 7: 38 թիվը չունի այդ հատկությունը: 21-ից մեծ և 30-ից փոքր քանի՞ այնպիսի թիվ կա, որ ունի այդ հատկությունը:

(A) 1 (B) 2 (C) 3 (D) 4 (E) 5

5 միավոր գնահատվող խնդիրներ

17. Նկարում բերված եռանկյան կողմերը երկու հավասար մասի բաժանող կետերը միացնելով՝ ստանում ենք ավելի փոքր եռանկյունի: Նույն գործողությունը կատարում ենք ստացված փոքր եռանկյան հետ: Ստացված ամենափոքր եռանկյան պես քանի՞սը կտեղավորվի սկզբնական եռանկյան մեջ:



(A) 5 (B) 8 (C) 10 (D) 16 (E) 32

18. 2013-ի հունվարի մեկից հետո քանի՞ տարի պետք է անցնի՝ մինչև առաջին անգամ տեղի ունենա հետևյալը. տարվա զրատման թվանշանների արտադրյալն ավելի մեծ է, քան դրանց գումարը:

(A) 87 (B) 98 (C) 101 (D) 102 (E) 103

19. Դեկտեմբեր ամսին Թավիշ կատուն քնեց ճիշտ 3 շաբաթ: Քանի՞ ընդամենը քնեց նա քնած չէր այդ ամիս:

(A) (31-7)·3·24·60 (B) (31-7·3)·24·60·60 (C) (30-7·3)·24·60
(D) (31-7)·24·60 (E) (31-7·3)·24·60

20. Բարսեղն ունի դոմինոյի խաղաքարեր, որոնք ցույց են տրված նկարում: Նա ուզում է դասավորել դրանք՝ ըստ դոմինոյի կանոնների. ցանկացած կողք-կողքի դրված խաղաքարերի հպվող քառակուսիների վրայի կետերի թիվը պետք է նույնը լինի: Ամենաշատը քանի՞ խաղաքար նա կարող է դասավորել այս ձևով:




(A) 3 (B) 4 (C) 5 (D) 6 (E) 7

21. Գուրգենը պետք է վաճառի 10 ապակե զանգակ, որոնցից յուրաքանչյուրի գինը 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 կամ 10 եվրո է: Քանի՞ եղանակով նա կարող է բոլոր զանգակները բաժանել երեք խմբաքանակի, որպեսզի դրանց գները նույնը լինեն:

(A) 1 (B) 2 (C) 3 (D) 4 (E) Նման ձևով բաժանելն անհնար է:

22. Պետրոսը գնել է գորգ, որի լայնությունը 36 դմ է, երկարությունը՝ 60 դմ: Գորգի նախընթաց կազմված է փոքր քառակուսիներից, որոնցից մի մասի վրա պատկերված է շրջան, մյուսների վրա՝ եռանկյունի: Նկարից երևում է, որ լայնության վրա տեղավորվում է 9 քառակուսի: Քանի՞ եռանկյունի կա լրիվ բացված գորգի վրա:




(A) 68 (B) 67 (C) 65 (D) 63 (E) 60

23. Փոքրիկ Ռոնն գրեց մի քանի թիվ՝ օգտագործելով միայն 0 և 1 թվանշանները: Այդ թվերի գումարը 2013 է: Պարզվեց, որ հնարավոր չէ ստանալ այդ գումարը գումարելիների ավելի փոքր քանակով: Քանի՞ թիվ էր գրել փոքրիկ Ռոնն:

(A) 2 (B) 3 (C) 4 (D) 5 (E) 204

24. Մարինեն ունի նկարում պատկերված մոխրագույն մարմինների մեծ քանակություն: Ամենաքիչը քանի՞ այդպիսի մարմին կպահանջվի մոխրագույն քառակուսի կառուցելու համար:



(A) 3 (B) 4 (C) 6 (D) 8 (E) 16